ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13 օգոստոսի 2018թ. N 273

Ք.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N260 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի հուլիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2018 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին>> N260 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) որոշմամբ հաստատված N1 հավելվածում՝

      ա. <<Արմեն Դարբինյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ>> բառերը փոխարինել <<Սողոմոն Սարգսյանյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ>> բառերով.

      բ. <<Արշակ Ղորղանյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնգետ.>> բառերը փոխարինել <<Արմեն Ավչյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնգետ.>> բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.08.2018 11:14:33 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403